

## ՄԱՍ 8. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հաշվետու ժամանակահատվածում պետական վիճակագրության ոլորտում իրականացված՝ Եռամյա և տարեկան ծրագրերով նախանշված և այլ միջոցառումները ֆինանսավորվել են հետևյալ հիմնական աղբյուրներից՝

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե. Նախատեսվել է ընդամենը 2673253.4 հազ. դրամ, այդ թվում ըստ տարիների՝ 2007թ.՝ 785540.5 հազ. դրամ, 2008թ.՝ 877325.1 հազ. դրամ և 2009թ.՝ 1010387.8 հազ. դրամ, հատկացվել է ընդամենը՝ 2551258.6 հազ. դրամ, այդ թվում ըստ տարիների՝ 2007թ.՝ 760002.4 հազ. դրամ, 2008թ.՝ 849710.7 հազ. դրամ և 2009թ.՝ 941545.5 հազ. դրամ, հատկացումը նախատեսվածի նկատմամբ կազմել է 95.4%, այդ թվում ըստ տարիների՝ 2007թ.՝ 96.7%, 2008թ.՝ 96.9% և 2009թ.՝ 93.2%:

Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհներ. Դրամաշնորհային միջոցներով իրականացված ծրագրերի գերակշիռ մասի ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվել է դոնոր կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության Ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից: Դրամաշնորհային միջոցներով իրականացված ծրագրերի ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվել է ընդամենը՝ 53152.0 հազ.դրամ, այդ թվում ըստ տարիների՝ 2007թ.՝ 7652.2 հազ. դրամ, 2008թ.՝ 42822.3 հազ. դրամ, 2009թ.՝ 2677.5 հազ. դրամի չափով: